Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակներում կայացավ «Ամասիա համայնքում կենցաղային խնամքի ծառայություններ տարեցների համար» ծրագրի պայմանագրի ստորագրման արարողությունը

2018 թվականի մարտի 13-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում կայացավ «Ամասիա համայնքում կենցաղային խնամքի ծառայություններ տարեցների համար» ծրագրի պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակներում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Էյջի Տագուչին, ինչպես նաև «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն ներկայացնող տիկին Վարդուհի Դադունցը, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ պարոն Սեյրան Պետրոսյանը, Ամասիայի համայնքապետ տիկին Ջեմմա Հարությունյանը և այլ հյուրեր:

Ծրագրի նպատակն է կենցաղային խնամքի ծառայություններ մատուցել տարեցների համար Ամասիա համայնքում, որտեղ նկատվում է աղքատության և բնակչության կրճատման բարձր մակարդակ: Ճապոնիայի կառավարությունը հիմնականում կաջակցի ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մեքենա և սարքավորումներ ձեռք բերելու հարցում: Ակնկալվում է մոտ 50 միայնակ, խոցելի և հաշմանդամություն ունեցող տարեցներին կանոնավոր կենցաղային ծառայությունների մատուցում, ինչպիսիք են պարզ բժշկական զննում, վարսահարդարում, գյուղատնտեսական աշխատանքներ, կենցաղային աշխատանք, լվացք, ձյունահավաք և այլ բարենաստ աջակցություն: Ծառայությունը կայուն կերպով գործարկվելու է Ամասիայի համայնքապետարանի կողմից՝ երիտասարդների ակտիվ մասնակցությամբ՝ որպես կամավորներ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի վերահսկողության ներքո:

Ծրագրի անունը՝ Ամասիա համայնքում կենցաղային խնամքի ծառայություններ տարեցների համար (ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում)
Ցահառու՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ
Դրամաշնորհի չափը՝ 28,881 ԱՄՆ դոլար (3,176,910 ճապոնական յեն)
Դրամաշնորհի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ Մարտի 13, 2018


Տիկին Դադունցի բացման խոսքը

Դեսպան Տագուչիի շնորհավորական ուղերձը

Տիկին Հարությունյանի խոսքը

Պարոն Պետրոսյանի խոսքը

Դրամաշնորհի պայմանագրի ստորագրումը

Դեսպան Տագուչիի և տիկին Դաղունցի ամուր ձեռքսեղմումը

Արարողությանը ներկա էին կամավորներ, որոնք իրենց մասնակցությունն են ունենալու կենցաղային խնամքի ծառայությունների մատուցման գործում



Վրաստանում PIN-ի կողմից գործարկված նմանատիպ ծրագիր ներկայացնող տեսահոլովակ

Ծրագրի շահառու՝ 90-ամյա միայնակ կին